



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“*24*” ..... *02* ..... 2020թ.

N..... *242-16* .....

**Հ Ր Ա Մ Ա Ն**

**ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 3-րդ մասով, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 441-Ա հրամանով և հիմք ընդունելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածը և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության պետի 2020 թվականի փետրվարի 18-ի թիվ Ն/26.1/648-2020 միջնորդագիրը՝ «Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊ ընկերության կողմից թույլ տրված խախտումների հիմքով ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման վերաբերյալ.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Հարուցել վարչական վարույթ «Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊ ընկերության թույլ տրված խախտումների հիմքով:
2. Վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովին՝
  - 1) վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի անդամներին և վարույթի մասնակիցներին ծանուցել վարչական վարույթի հարուցման, անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին.
  - 2) վարչական վարույթի արդյունքում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին ներկայացնել համապատասխան վարչական ակտ ընդունելու վերաբերյալ հիմնավոր առաջարկություն՝ ներկայացնելով նաև վարչական ակտի նախագիծը:
3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանին:

2/22/2020

X



---

VERIFIED OCSP 2/22/2020 14:35:39 GMT+4

Signed by: VARDANYAN HAKOB 3914890533

/Ա. Պապիկյան